ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3

«ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՊՁԲ-17/8» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան 05 հոկտեմբերի 2017թ.
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Վարդանյան

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Հ. Շեկոյան, Լ. Միքայելյան

Հանձնաժողովի բացող անդամներ՝ Ա. Եղիազարյան, Վ. Թորոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Կ. Աբգարյան:

1. «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՊՁԲ-17/8» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման վայրի, մասնակիցներին ուղարկված ծանուցման, հայտերի ներկայացման, գնահատման, արդյունքների հաստատման /ընթացակարգի արդյունքների ամփոփման/ մասին.

1.1 Հայտ ներկայացնելու մասին՝ 28.09.2017թ. գնման ընթացակարգ է հրապարակվել www.armeps.am կայքում, ինչպես նաև հրավերը հրապարակվել է www. gnumner.am պաշտոնական կայքում:

1.2 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացվել են 2017 թվականի հոկտեմբերի 05-ին, ժամը՝ 12:00-ին www.armeps.am կայքի միջոցով:

1.3 Հայտեր էին ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Մասնակցի անվանումը	Հայտերի գնահատման արդյունքները /համապատասխանելու դեպքում նշել "X"/
«ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ	X
«Մեդիսար» ՍՊԸ	X
«Փինք Ֆլամինգո Գ. և Ա. Կենտրոն» ՍՊԸ	«Փինք Ֆլամինգո Գ. և Ա. Կենտրոն» ՍՊԸ կողմից ներկայացված հայտի ապահովումը չի համապատասխանում armeps.am կայքում հրապարակված հրավերի 7-րդ կետին, ուստի ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» N 526 Ն որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետով մասնակցի հայտը մերժվել է

1.4 Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջների համապատասխան կազմված հայտերի հիման վրա Մասնակցի առաջարկած գները՝

Չափաբաժնի համարը	Գնման ապրանքի անվանումը	Չափման միավորը	Գնման առարկայի նախա-հաշվային գինը	Գնային առաջարկը ընդհանուր չափաբաժնի համար առանց ԱԱՀ-ի (ՀՀդրամ)		
				«ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ	«Մեդիսար» ՍՊԸ	«Փինք Ֆլամինգո Գ. և Ա. Կենտրոն» ՍՊԸ
1	ջերմաչափեր	հատ	900 000,00	1 500 000,00	700 000,00	1 499 000,00

«ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՊՁԲ-17/8» ծածկագրով ԳՀ միջոցով էլեկտրոնային ձևով կազմակերպված ընթացակարգի բոլոր մասնակիցներն իրենց կողմից ներկայացրած գնային առաջարկը ներկայացրել են ԱԱՀ-ն ներառյալ:

2. ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կարիքների համար 2017թ. ընթացքում ջերմաչափերի ձեռքբերման նպատակով գնանշման հարցման միջոցով էլեկտրոնային ձևով կազմակերպված «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՊՁԲ-17/8» ծածկագրով ընթացակարգի գնահատման ընթացքում **հանձնաժողովը որոշեց՝**

2.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526 Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 40-րդ կետի 4-րդ ենթակետով՝ «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՊՁԲ-17/8» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած Մասնակից «Փինք Ֆլամինգո Գ. և Ա. Կենտրոն» ՍՊԸ-ի հայտը մերժել, քանի որ Մասնակցի կողմից ներկայացված հայտի ապահովումը չի համապատասխանում armeps.am կայքում հրապարակված հրավերի 7-րդ կետի պահանջներին:

2.2 «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՊՁԲ-17/8» ծածկագրով գնման ընթացակարգի N 1 չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Մեդիսար» ՍՊԸ-ին, որի գինը չի գերազանցում այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

2.3 Ծանուցում ուղարկել առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ «Մեդիսար» ՍՊԸ-ին առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով պահանջվող փաստաթղթերը՝ առաջարկվող ապրանքի անվանումը, ապրանքային նշանը, տեխնիկական բնութագիրը, արտադրողը և ծագման երկիրը, որակի սերտիֆիկատը:

2.4 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» N 526-Ն որոշման 43-րդ կետի 3-րդ ենթակետով էլեկտրոնային փոստի միջոցով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե ներկայացնել հարցում (Հավելված 8) առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի.

Նախագահ՝ ---------- Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Քարտուղար՝ ---------- Կ. ԱԲԳԱՐՅԱՆ

Գնահատող անդամներ՝

1. ---------- Հ. ՇԵԿՈՅԱՆ

2. ---------- Լ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Բացող անդամներ՝

1. ---------- Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2. ---------- Վ. ԹՈՐՈՍՅԱՆ